955 Խավար գիշեր է, լռել է ամեն բան,

1. Խավար գիշեր է, լռել է ամեն բան,
Դու ես արթուն միայն, մա՛յր իմ անգին,
Լսում եմ կամաց իմ անունը միայն,
Որ կրկնում ես անվերջ քո աղոթքում:

2. Ինչ որ արել եմ, դու ինձ միշտ ուղղել ես,
Փորձության ժամին կողքիս ես եղել,
Աստծո օգնությամբ իմ կյանքը փոխել ես,
Աստծո եկեղեցի ես ինձ տարել:

3. Դեմքիդ նայելիս տխրում է իմ հոգին.
Կյանքը իր խոր հետքերն է թողել,
Հաճախ իմ սխալ ու անմիտ վարվելուց
Վիրավորվել ես դու և արտասվել:

4. Ճերմակ է իջել արդեն քո մազերին,
Գիտեմ, սիրելի՛ս, ես եմ արել,
Բայց խնդրում եմ քեզ, մա՛յր իմ, դու ինձ ներիր,
Որ այդքան դառնություն եմ պատճառել:

5. Եվ թող տա Աստված՝ մեր բոլոր մայրերը
Սրտանց աղոթեն որդկանց համար,
Որ հավիտենական կյանքը մտնելիս
Լինեն որդիները սուրբ, կատարյալ: